ԿԱԶՄՎԱԾ է « 15 » դեկտեմբերի 2025թ.
ՏՊԱԳՐՎԱԾ է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
«ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ-ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
2025Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի
ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ՏՆՕՐԵՆ՝
ԱՆԳԵԼԻՆԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

«23» 01 2026թ.

ԳՐԱՆՑՎԱԾ է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 30.01.2013թ.
գրանցման թիվ 211.171.751825
հարկ վճարողի հաշվառման համար 02615234
26.04.2021թ. գրանցված կանոնադրության
թիվ 0032 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից
«09» 02 2026թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ-ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Ներքին աուդիտորների ինստիտուտ-Հայաստան» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Ինստիտուտ), ոչ առևտրային Կազմակերպություն է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվում են իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակության առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործողություն իրականացնելու նպատակով:

1.2. Ինստիտուտը գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3. Ինստիտուտի գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամների շահերի ընդհանրությունը, անդամության կամավորությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

1.4. Ինստիտուտը գործում է ՀՀ ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5. Ինստիտուտը գործում է առանց անդամության սահմանափակման:

1.6. Ինստիտուտը գործում է առանց ժամկետի սահմանափակման (անժամկետ):

1.7. Ինստիտուտի անվանումն է՝

հայերեն լրիվ «Ներքին աուդիտորների ինստիտուտ-Հայաստան» հասարակական կազմակերպություն

կրճատ՝ «ՆԱԻ-Հայաստան» ՀԿ

անգլերեն լրիվ՝ "Institute of Internal Auditors-Armenia" Non-Governmental Organization

կրճատ՝ "IIA-Armenia" NGO

ռուսերեն լրիվ՝ «Институт Внутренних Аудиторов-Армения» Общественная организация

կրճատ՝ «ИВА-Армения» ОО

1.8. Ինստիտուտի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան շ. 28:

2. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Ինստիտուտի գործունեության առարկան է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝

2.1.1. Ինստիտուտի կողմից մասնագիտական որակավորման գործընթացների ներդրումը,

2.1.2. Ինստիտուտի անդամների մասնագիտական վարքի կանոնների մշակումը, ներդրումն ու կիրառումը,

2.1.3. ներքին աուդիտի բնագավառում գործունեությունը համակարգելու, գործառնական, ուսումնական և գիտական մշակումներին մասնակցելու նպատակով այլ հասարակական (միջազգային և տեղական) կազմակերպությունների,

ուսումնագիտական կազմակերպությունների հետ համագործակցությունը, դրանցում անդամակցությունն ու մասնակցությունը,

2.1.4. մասնակցությունը ներքին աուդիտի ստանդարտներին համապատասխան ներքին աուդիտի ծառայությունների մատուցմանն աջակցող մեխանիզմների մշակմանն ու դրանց ներդրմանը, ներքին աուդիտի, ռիսկերի գնահատման, ներքին հսկողության և կորպորատիվ կառավարման բնագավառներում իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին աջակցությունը,

2.1.5. կանոնադրական գործունեության շրջանակներում Ինստիտուտի անդամներին ներքին աուդիտի, ռիսկերի գնահատման, ներքին հսկողության, կորպորատիվ կառավարման, հաշվապահական հաշվառման, աուդիտի, ֆինանսների, հարկային, SS ոլորտի ռիսկերի, կիբեռանվտանգության և տնտեսական այլ ոլորտների օրենսդրության հարցերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը,

2.1.6. ներքին աուդիտորների, ներքին աուդիտի ծառայություններ մատուցող ընկերությունների փորձի վերլուծությունը և համակարգված ներկայացումը,

2.1.7. ներքին աուդիտի, ռիսկերի գնահատման, ներքին հսկողության, կորպորատիվ կառավարման, հաշվապահական հաշվառման, ֆինանսների, հաշվապահական, վերլուծական, աուդիտի և տնտեսական մասնագիտական գրականության գրադարանի, տեղեկատվական բազայի հավաքագրման և վերլուծության գծով համակարգչային ծրագրերի ստեղծումը, մասնագիտական գրականությամբ և իրավական ակտերով Ինստիտուտի անդամներին ապահովումը,

2.1.8. ներքին աուդիտի, ռիսկերի գնահատման, ներքին հսկողության, կորպորատիվ կառավարման, հաշվապահական հաշվառման, ֆինանսների վերաբերյալ դասախոսությունների, գիտագործնական կոնֆերանսների, գործարար հանդիպումների, փորձի փոխանակման հավաքների և այլ միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը,

2.1.9. ներքին աուդիտի, ռիսկերի գնահատման, ներքին հսկողության, կորպորատիվ կառավարման ոլորտներում գործունեության ընթացքում ծագող մեթոդական հարցերի և խնդիրների լուծմանն ուղղված մասնագիտական օգնություն ցույց տալու համար հետազոտական աշխատանքների կազմակերպումը, ուսումնասիրությունների, գիտական, կրթական նվաճումների, նորամուծությունների ներդրման ու տարածման աջակցությունն ու խրախուսումը, մասնագիտական գրականության հրատարակումը,

2.1.10. Ինստիտուտի կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված այլ աշխատանքների իրականացումը:

2.2. Ինստիտուտի նպատակներն են՝

2.2.1. Օրենքով սահմանված կարգով աջակցել Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի գործունեության զարգացմանը,

2.2.2 ունենալ Ինստիտուտի մասնագիտական վարքի հաստատված և կիրառելի կանոններ՝ աջակցելով Ինստիտուտի անդամների իրավունքների և շահերի պաշտպանությանը,

2.2.3 խորացնել ու զարգացնել Ինստիտուտի անդամների մասնագիտական ունակություններն ու գիտելիքները,

2.2.4 աջակցել ներքին աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան ներքին աուդիտի ծառայությունների մատուցմանը, մասնակցել ներքին աուդիտի բնագավառում իրավական ակտերի նախագծերի մշակմանը,

2.2.5 ներքին աուդիտի բնագավառում համագործակցել այլ մասնագիտական հասարակական (միջազգային և տեղական) կազմակերպությունների, ուսումնագիտական կազմակերպությունների հետ,

2.2.6 դասախոսությունների, գիտագործնական կոնֆերանսների, գործարար հանդիպումների, փորձի փոխանակման հավաքների և այլ միջոցառումների կազմակերպման ու անցկացման միջոցով ներկայացնել ու վերլուծել ներքին աուդիտի, ռիսկերի կառավարման, վերահսկողության, հաշվապահական հաշվառման, ֆինանսների, աուդիտի բնագավառի խնդիրները,

2.2.7 ներքին աուդիտի, ռիսկերի կառավարման, վերահսկողության, հաշվապահական, վերլուծական, աուդիտի և տնտեսական մասնագիտական գրականության գրադարանի, տեղեկատվական վերլուծության բազայի, համակարգչային ծրագրերի ստեղծման միջոցով բարձրացնել մասնագիտության դերն ու հեղինակությունը,

2.2.8 իրականացնել ներքին աուդիտի, ռիսկերի կառավարման, վերահսկողության, հաշվապահական հաշվառման, աուդիտի, ֆինանսների, հարկային և տնտեսական այլ ոլորտների օրենսդրության և այլ հարցերի վերաբերյալ գիտական, հետազոտական, ուսումնամեթոդական գործունեություն,

2.2.9 հրատարակել մասնագիտական պարբերական մամուլ և գրականություն:

2.3. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար Ինստիտուտը կարող է համագործակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման Ինստիտուտների, ՀՀ ում գրանցված այլ Ինստիտուտների հետ:

2.4. Ինստիտուտն ինքնուրույն է որոշում իր գործունեության ձևերը:

2.5. Ինստիտուտը կարող է իրականացնել սույն կանոնադրությամբ չնախատեսված, սակայն ՀՀ օրենսդրությանը չհակասող ցանկացած այլ գործունեություն:

2.6. Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար Ինստիտուտը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.7. Ինստիտուտի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը չի բաշխվում անդամների միջև, այլ ամբողջությամբ ուղղվում է միայն Ինստիտուտի կանոնադրական նպատակներին:

3. ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Օրենքով սահմանված կարգով Ինստիտուտի անդամ կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած 18 տարին լրացած քաղաքացի, քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձինք և իրավաբանական անձինք, ովքեր ընդունում են սույն կանոնադրությունը, Ինստիտուտի նպատակները, սկզբունքներն ու խնդիրները, ցանկանում են մասնակցել Ինստիտուտի գործունեությանը:

3.2. Ինստիտուտի հիմնադիրները Ինստիտուտի պետական գրանցումից հետո օրենքի ուժով համարվում են Ինստիտուտի անդամներ:

3.3. Ինստիտուտի անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը հայտնում է Ինստիտուտի կանոնադրության և վարքագծի հետ իր համաձայնության մասին՝ Ինստիտուտի պաշտոնական կայքում գրանցվելու կամ Ինստիտուտի պաշտոնական էլեկտրոնային հասցեին սահմանված ձևաչափով անդամակցության լրացված հայտն ուղարկելու միջոցով: Ինստիտուտի անդամի ընդունելությունը կատարվում է Ինստիտուտի Տնօրենների Խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) կամ վերջինիս կողմից նման իրավունքներով լիազորված՝ «Թեկնածության և անդամակցության» կոմիտեի որոշմամբ:

3.4. Ինստիտուտին անդամագրված անձը կարող է ցանկացած ժամանակ դուրս գալ Ինստիտուտից՝ այդ մասին գրավոր դիմում ներկայացնելով Խորհրդին: Ինստիտուտի անդամությունից զրկումը տեղի է ունենում Խորհրդի կամ վերջինիս կողմից նման իրավունքներով լիազորված՝ «Թեկնածության և անդամակցության» կոմիտեի որոշմամբ:

3.5. Անդամակցության դիմումը մերժելու դեպքում Խորհրդի կամ «Թեկնածության և անդամակցության» կոմիտեի կողմից դիմումատուին ուղարկվում է գրավոր պատճառաբանված մերժում:

3.6. Ինստիտուտի անդամները վճարում են տարեկան անդամավճար: Տարեկան անդամավճարի գումարը հաշվարկվում է անդամագրվելու վերաբերյալ համապատասխան որոշում ընդունելուն հաջորդող ամսվանից մեկ օրացուցային տարի ժամանակահատվածի համար: Ինստիտուտի անդամների անդամավճարի չափը որոշում է Ինստիտուտի Խորհուրդը:

3.7. Ինստիտուտի այն անդամը, որը Խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում վեց ամիս անընդմեջ չի վճարում անդամավճար կամ պարբերաբար խախտում է սույն կանոնադրության դրույթները կամ չի կատարում Ինստիտուտի կառավարման մարմինների պարտադիր կատարման ենթակա որոշումները՝ Խորհրդի որոշմամբ զրկվում է անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

4. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Ինստիտուտի ցանկացած անդամ իրավունք ունի՝

4.1.1. ընտրել և ընտրվել Ինստիտուտի կառավարման կամ վերահսկողություն իրականացնող մարմիններում:

4.1.2. ներկա լինել Ժողովին ինչպես նաև Ինստիտուտի Խորհրդի նիստերին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով:

4.1.3. Խորհրդի կողմից սահմանված կարգով, անվճար օգտվել Ինստիտուտի ծառայություններից:

4.1.4. ծանոթանալ Ինստիտուտի մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները:

4.1.5. Ինստիտուտի մարմինների որոշումները բողոքարկել ժողովին: Ժողովի որոշումը, որն ընդունվել է օրենքի կամ Ինստիտուտի կանոնադրության խախտմամբ կամ ոտնահարել է Ինստիտուտի կամ նրա մասնակցի (անդամի) իրավունքներն ու օրինական շահերը,

կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել Ինստիտուտի կամ մասնակցի (անդամի) դիմումի հիման վրա: Դիմումը կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Ինստիտուտի անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

4.1.6. Ինստիտուտից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Ինստիտուտի կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը (պատճենների տրամադրման համար գանձվող վճարը չի կարող գերազանցել դրանց պատրաստման համար անհրաժեշտ ծախսերը)., որոնք վերաբերում են վերջին հինգ տարիներին:

4.1.7. Ինստիտուտի աշխատանքները բարելավելու նպատակով նրա կառավարման մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ:

4.1.8. Ներկա գտնվել Ինստիտուտի ժողովին, եթե վերջինս անցկացվում է Ինստիտուտի անդամների պատվիրակների կազմով, իսկ ինքը պատվիրակ չի ընտրվել:

4.1.9. Ծանոթանալ Ինստիտուտի մարմինների աշխատանքի արձանագրման մասին փաստաթղթերին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները (պատճենների տրամադրման համար գանձվող վճարը չի կարող գերազանցել դրանց պատրաստման համար անհրաժեշտ ծախսերը).

4.1.10. Սպառիչ տեղեկատվություն ստանալ Ինստիտուտի գործունեության մասին:

4.1.11. Ազատ դուրս գալ Ինստիտուտից՝ այդ մասին գրավոր դիմում ներկայացնելով Խորհրդին:

4.1.12. Մասնակցել Ինստիտուտի կողմից կազմակերպված միջոցառումներին:

4.2. Ինստիտուտի անդամը պարտավոր է՝

4.2.1. Հոգ տանել Ինստիտուտի հեղինակության մասին:

4.2.2. Կատարել Ինստիտուտի կանոնադրության պահանջները, կառավարման մարմինների որոշումները:

4.2.3. Մուծել մուտքի վճար և ամսական անդամավճար՝ Խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում:

4.2.4. Բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները:

4.3. Ինստիտուտի կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Ինստիտուտի Ժողովի կամ Խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության, խիստ նկատողություն կամ Ինստիտուտի անդամությունից զրկում:

5. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1. Ինստիտուտը հանդիսանում է իրավաբանական անձ՝ պետական գրանցման պահից:

5.2. Ինստիտուտն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումներով և խորհրդանշով կլոր կնիք, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթներով:

5.3. Ինստիտուտը, իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

5.3.1. իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5.3.2. բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

5.3.3. ստեղծել այլ կազմակերպություն կամ լինել նրա մասնակից:

5.3.4. ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ:

5.3.5. տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին:

5.3.6. կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ:

5.3.7. օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամներիիրավունքներն ու օրինական շահերն այլ Ինստիտուտներում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

5.3.8. Ինստիտուտի անվանումն այլ անձի կողմից ապօրինի օգտագործելու, այդ թվում՝ վերջինիս անվանմամբ իրավունքներ և պարտականություններ ձեռք բերելու դեպքերում Ինստիտուտն իր իրավունքները կարող է պաշտպանել դատական կարգով:

5.3.9. համագործակցել այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալել, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել կազմակերպություն կամ անդամակցել նրանց ստեղծած կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը:

5.3.10. Ինստիտուտն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինել իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծել առևտրային Կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

5.3.11. Եթե Ինստիտուտի գույքի ստացման աղբյուր չեն հանդիսացել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ օրենք) նախատեսված հանրային միջոցները, Ինստիտուտն իրավունք ունի Հասարակական կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակելու ինչպես 6.1.8. կետով նախատեսված հաշվետվությունը, այնպես էլ իր գործունեության ցանկացած արդյունքի վերաբերյալ տեղեկություններ կամ նյութեր: Ինստիտուտի հաշվետվությունը պահպանվում է հինգ տարուց ոչ պակաս ժամկետով:

5.3.12. կատարել օրենքով չարգելված այլ գործողություն:

5.4. Ինստիտուտը կարող է իր նպատակներին համապատասխան՝ օրենքով սահմանված կարգով իր աշխատանքներում ներգրավել կամավորների:

6. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Ինստիտուտը պարտավոր է՝

6.1.1. Վարել իր անդամների և կամավորների հաշվառումը:

6.1.2. Եթե Ինստիտուտը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է տաս միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա օրենքով սահմանված կարգով պետական մարմիններ ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան հաջորդող տարվա մայիսի 15-ը հանրային միջոցներից ֆինանսավորման մասով ենթակա են պարտադիր աուդիտի:

6.1.3. Պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը:

6.1.4. Օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր:

6.1.5. Ինստիտուտի անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Ինստիտուտի կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, Ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը:

6.1.6. Ինստիտուտի կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

6.1.7. Իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Ինստիտուտի կառավարման մարմինների հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը:

6.1.8. Ինստիտուտը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը, հրապարակել օրենքով նախատեսված հաշվետվությունը:

6.1.9. Կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

6.2. Ինստիտուտի մարմինները նրա անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Ինստիտուտի:

7. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Ինստիտուտի գույքի ձևավորման աղբյուրներ կարող են լինել՝

7.1.1. Ինստիտուտի անդամների ներդրումները:

7.1.2. Ինստիտուտի անդամների վճարումները (անդամավճարները):
7.1.3. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները:
7.1.4. Իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպությունից ստացված միջոցները:
7.1.5. Դրամական մուտքերը պետական բյուջեից:
7.1.6. Նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները:
7.1.7. Հանգանակությունները:
7.1.8. Օրենքով չարգելված այլ միջոցներ:

7.2. Ինստիտուտի հիմնադիրների և անդամների՝ սեփականության իրավունքով Ինստիտուտին հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված գույքը Ինստիտուտի սեփականությունն է:

7.3. Ինստիտուտն իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան՝ օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով:

7.4. Ինստիտուտի հիմնադիրները և անդամները Ինստիտուտին որպես սեփականություն հանձնած գույքի (ներառյալ՝ անդամավճարների) նկատմամբ իրավունքներ չունեն: Նրանք պատասխանատու չեն Ինստիտուտի պարտավորությունների, իսկ Ինստիտուտը՝ իր հիմնադիրների և անդամների պարտավորությունների համար:

7.5. Ինստիտուտի գույքը չի կարող բաշխվել նրա հիմնադիրների և անդամների միջև:

8. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆԸ

8.1. Ինստիտուտի բարձրագույն կառավարման մարմինը Ինստիտուտի համաժողովն (այսուհետ նաև՝ Ժողով) է:

8.2. Ինստիտուտի կոլեգիալ կառավարման մարմինը Ինստիտուտի Տնօրենների խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):

8.3. Ինստիտուտի գործադիր մարմնի ղեկավարն Ինստիտուտի Տնօրենն է:

8.4. Ինստիտուտի վերստուգող մարմինը Վերստուգողն է:

Ինստիտուտի Ժողովը

8.5. Ինստիտուտի գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Ինստիտուտի բարձրագույն մարմնին՝ Ժողովին:

8.6. Ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ, մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն կամ փոխանակելով փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել, որ փաստաթուղթը ելնում է նրանում որպես հեղինակ նշված անձից: Ժողովի օրակարգի, նրա աշխատանքի ժամանակի և վայրի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն պատվիրված նամակով կամ Խորհրդի կողմից որոշված այլ եղանակով՝ ոչ ուշ, քան Ժողովի անցկացման օրվանից հինգ օր առաջ՝ հավաստելով հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստանալու փաստը:

8.7. Եթե Ինստիտուտի անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա Խորհրդի կողմից սահմանված կարգով Ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները՝ յուրաքանչյուր 10 անդամից ընտրված մեկական պատվիրակ:

8.8. Ժողովն իրավազոր է, եթե գումարվել է ՀՀ օրենսդրության և կանոնադրությանը համապատասխան և ժողովին մասնակցում են Ինստիտուտի բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին:

8.9. Ինստիտուտի արտահերթ Ժողով գումարվում է Ինստիտուտի անդամների առնվազն մեկ երրորդի, Խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի, Տնօրենի կամ Ինստիտուտի Վերստուգողի նախաձեռնությամբ՝ Խորհրդի կողմից՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով՝ նախաձեռնությունից ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում հերթական Ժողով հրավիրելու համար սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Արտահերթ Ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Ժողովի մասնակիցները ծանուցվում են ոչ ուշ, քան արտահերթ Ժողով անցկացնելու օրվանից հինգ օր առաջ:

8.10. Ինստիտուտի Ժողովն ունի Ինստիտուտի գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում կայացնելու իրավունք:

8.11. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

8.11.1. կատարել Ինստիտուտի կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատել կանոնադրությունը,

8.11.2. ստեղծել այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունել այլ Կազմակերպությունում Ինստիտուտի մասնակցության մասին,

8.11.3. հաստատել Ինստիտուտի կառուցվածքը,

8.11.4. որոշումներ ընդունել Ինստիտուտի Խորհրդի, վերստուգողի ընտրության կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին, հաստատել Ինստիտուտի ռազմավարությունը,

8.11.5. առնվազն երկու տարին մեկ հաստատել Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում Ինստիտուտի գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման հաշվետվությունները, Ինստիտուտի և նրա մամինների հաշվետվությունները, որոնք Ժողովի հաստատմանն են ներկայացվում Վերստուգողի եզրակացության հետ միասին,

8.11.6. դադարեցնել Ինստիտուտի մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը,

8.11.7. ընդունել որոշում Ինստիտուտի վերակազմակերպման մասին,

8.11.8. ընդունել որոշում Ինստիտուտը լուծարելու մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի,

8.11.9. իրականացնել օրենքով կամ Ինստիտուտի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

8.12. Ժողովը անցկացվում է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

8.12.1. Մինչև Ժողովի բացումը կատարվում է անդամների կամ նրանց պատվիրակների գրանցում: Գրանցումը կազմակերպում է Խորհրդի նախագահը:

8.12.2. Ժողովը բացվում է ծանուցման մեջ նշված ժամին կամ այդ պահին գրանցված անդամների ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ՝ ավելի ուշ:

8.12.3. Ժողովն ընտրում է Ժողովի նախագահ:

8.12.4. Ժողովը որոշումներ է ընդունում՝ Ինստիտուտի բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե մասնակցել են Ինստիտուտի բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների կեսից ավելին:

8.12.5. Ժողովի որոշումներն ընդունվում են անդամների կամ նրանց պատվիրակների/ներկայացուցիչների բաց կամ փակ (գաղտնի) քվեարկությամբ: Քվեարկության ընթացքում յուրաքանչյուր անդամ կամ նրա ներկայացուցիչ ունի 1 ձայնի իրավունք: Ընդ որում մեկ ոլորտը (Հեռահաղորդակցություն, բանկային, հանրային հատված և այլ) ներկայացնող անդամները չեն կարող ունենալ որոշիչ քվեների մեծամասնություն, որը կարող է հանգեցնել ինստիտուտի գործունեության վրա անհամաչափ կամ գերիշխող ազդեցության, ինչպես նաև որոշումների վրա վերահսկողության իրականացման՝ հետևաբար խաթարելով ինստիտուտի բազմակարծությունը, անկախությունն ու ոլորտային հավասարակշռությունը:

8.12.6. Եթե Ժողովում քննարկվում է Ժողովի որևէ մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Ժողովի տվյալ մասնակիցը քվեարկությանը չի մասնակցում:

8.12.7. Օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման համար իրականացվող քվեարկության կարգը սահմանում է Ժողովը:

8.12.8. Ժողովի ընդունած որոշումները գրանցվում են արձանագրության տեսքով, որը վարում է Ժողովի կողմից ընտրված քարտուղարը:

8.12.9. Ժողովի արձանագրությունը ստորագրում են Ժողովի նախագահողը (նիստը վարողը) և քարտուղարը:

8.12.10. Ժողովի արձանագրությունների պահպանման ժամկետը հինգ տարի է:

8.12.11. Ժողովի որոշումը, որն ընդունվել է օրենքի կամ սույն կանոնադրության խախտմամբ կամ ոտնահարել է Ինստիտուտի կամ նրա անդամի, հիմնադրի իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել Ինստիտուտի կամ անդամի, հիմնադրի դիմումի հիման վրա: Դիմումը կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Ինստիտուտի անդամն կամ հիմնադիրն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

<u>Ինստիտուտի Խորհուրդը</u>

8.13. Խորհուրդն ընտրվում է Ժողովի կողմից երկու տարի ժամկետով: Խորհրդի անդամների թեկնածուները կարող են առաջադրվել ինքնառաջադրման կամ խորհրդի գործող անդամների կողմից առաջադրման կարգով: Թեկնածուների պետք է համապատասխանեն Խորհրդի անդամների ընտրության կարգին և (կամ) չափանիշներին, որոնք մշակվում և առաջարկվում են Խորհրդի կողմից և հաստատվում են Ընդհանուր ժողովի կողմից:

8.14. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Ինստիտուտի Խորհրդի նախագահի կողմից ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի

նիստ կարող է հրավիրվել նաև Ինստիտուտի անդամների 20%-ի, Խորհրդի երկու անդամների կամ Ինստիտուտի վերստուգողի պահանջով:

8.15. Խորհուրդը՝

8.15.1. Իր կազմից առաջին Խորհրդի նիստին ընտրում է Խորհրդի նախագահ:

8.15.2. Նշանակում է Ինստիտուտի Տնօրենին, դադարեցնում է նրա լիազորությունները,ինչպես նաև, վարձատրություն նախատեսված լինելու դեպքում, սահմանում է Տնօրենի վարձատրության կարգն ու լիազորությունների շրջանակը:

8.15.3. Հաստատում է Ինստիտուտի տնօրենի հաշվետվությունները, այդ թվում՝ Ժողովին ներկայացվող հաշվետվությունը:

8.15.4. Առաջարկություններ է ներկայացնում ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ:

8.15.5. Ընդունում է Ինստիտուտի անդամ, ազատում, և զրկում անդամությունից, կամ ստեղծում է նման իրավունքներով լիազորված «Թեկնածության և անդամակցության» կոմիտե:

8.15.6. Ինստիտուտի անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և տույժի միջոցներ:

8.15.7. Սահմանում է Ինստիտուտի անդամների կողմից մուտքի վճարի և անդամավճարի մուծման կարգը, չափերը և գանձման ձևերը:

8.15.8. Հաստատում է Ինստիտուտի ֆինանսական հաշվետվությունները և տարեկան բյուջեն:

8.15.9. Որոշումներ է ընդունում Ինստիտուտի անդամների կողմից ծառայություններից անվճար օգտվելու վերաբերյալ:

8.15.10. Ընտրում է Ինստիտուտի աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին), (եթե Ինստիտուտը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է տաս միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա օրենքով սահմանված կարգով պետական մարմիններ ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան հաջորդող տարվա մայիսի 15-ը հանրային միջոցներից ֆինանսավորման մասով ենթակա են պարտադիր աուդիտի),

8.15.11. Որոշումներ է ընդունում Ինստիտուտի առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին.

8.15.12. Ստեղծում և նշանակում է մշտական հանձնաժողովներ և այլ կոմիտեներ, որոնց նախագահը պետք է լինի Խորհրդի կազմից:

8.15.13. Իրականացնում է օրենքով և կանոնադրությամբ այլ անհրաժեշտ գործողությունները:

8.16. Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների կեսից ավելին:

8.17. Խորհրդի որոշումներն ընդունվում են Խորհրդի նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

8.18. Խորհրդի անդամը ցանկացած պահի կարող է դադարացնել խորհրդի անդամի իր լիազորությունները՝ խորհրդի նախագահին ներկայացված իր դիմումի համաձայն:

<u>Խորհրդի նախագահը</u>

8.19. Խորհրդի նախագահը՝

8.19.1. Համակարգում է խորհրդի գործունեությունը, հրավիրում Խորհրդի նիստեր և նախագահում դրանք:
8.19.2. Նշանակում է Խորհրդին կից մշտական հանձնաժողովներ և այլ կոմիտեներ:
8.19.3. Հաստատում է Խորհրդի նիստերի օրակարգը, նիստերի անցկացման օրը, ժամը և վայրը:
8.19.4. Հաստատում է Խորհրդի նիստերին հրավիրված անձանց ցանկը:
8.19.5. Ներկայացնում է Ինստիտուտը իր գործառույթների շրջանակներում:

Ինստիտուտի Խորհրդատվական խորհուրդը

8.20. Ինստիտուտը կարող է ստեղծել Խորհրդատվական խորհուրդ, որը հանդիսանում է Ինստիտուտի խորհրդակցական մարմին: Այն ձևավորվում է Ինստիտուտի գործունեության ռազմավարական ուղղությունների զարգացման, հեղինակության բարձրացման և միջազգային ճանաչելիության խթանման նպատակով:
8.21. Խորհրդատվական խորհրդի հիմնական գործառույթներն են՝
8.21.1. Ներկայացնել խորհրդատվական առաջարկություններ՝ Ինստիտուտի ռազմավարական զարգացման, ծրագրերի իրականացման և միջազգային համագործակցության ուղղությամբ:
8.21.2. Խթանել Ինստիտուտի հեղինակության բարձրացումը տեղական և միջազգային մասնագիտական շրջանակներում:
8.21.3. Աջակցել գիտելիքի և փորձի փոխանակման նախաձեռնություններին:
8.21.4. Խորհուրդներ տալ՝ կանոնադրական գործունեության շրջանակներում ընդգրկված ոլորտների միտումների, նորարարական մոտեցումների և գլոբալ պրակտիկայի վերաբերյալ:
8.22. Խորհրդատվական խորհուրդը ներկայացնում է կարծիքներ և դիտարկումներ՝ առանց կառավարչական կամ գործադիր պարտականություններ ստանձնելու:
8.23. Խորհրդատվական խորհրդի անդամները կարող են լինել բարձր մասնագիտական հեղինակությամբ փորձառու մասնագետներ կամ հանրային վստահություն ունեցող անձինք:
8.24. Խորհրդատվական խորհրդի անդամները ընտրվում են «Թեկնածության և անդամակցության» կոմիտեի կամ Խորհրդի կողմից սահմանված չափանիշների հիման վրա՝ Խորհրդի կողմից, առավելագույնը երկու տարի ժամկետով, բայց ոչ ավել քան գործող խորհրդի պաշտոնավարման ժամկետը:
8.25. Խորհրդատվական խորհրդի անդամները իրենց գործունեությունն իրականացնում են կամավոր հիմունքներով:

Ինստիտուտի տնօրենը

8.26. Ինստիտուտի տնօրենն իրականացնում է Ինստիտուտի գործադիր մարմնի իրավասությունները, որոնք ներառում են Ինստիտուտի ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Ինստիտուտի կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:
8.27. Ինստիտուտի տնօրենը՝

8.27.1. Ապահովում է Ժողովի կամ Խորհրդի որոշումների կատարումը:

8.27.2. Ներկայացնում է Ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում:

8.27.3. Առանց լիազորագրի գործում է Ինստիտուտի անունից, տալիս է լիազորագրեր:

8.27.4. Բանկերում բացում է Ինստիտուտի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ:

8.27.5. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

8.27.6. Խորհրդի հաստատմամբ կնքում է աշխատանքային պայմանագրեր Ինստիտուտի աշխատակիցների հետ:

8.27.7. Հաստատում է Ինստիտուտի հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը:

8.27.8. Հաստատում է Ինստիտուտի տարեկան գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման հաշվետվությունները, Ինստիտուտի և նրա մամինների հաշվետվությունները, որոնք առնվազն երկու տարին մեկ անգամ, Վերստուգողի եզրակացության հետ միասին, ներկայացվում են Խորհրդի և Ժողովի հաստատմանը:

8.27.9. Հաստատում է Ինստիտուտի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները:

8.27.10. Տնօրինում և կառավարում է Ինստիտուտի ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ինստիտուտի անունից:

8.28. Գործադիր մարմինը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Ինստիտուտի կանոնադրության, Ժողովի, Խորհրդի որոշումների կամ կնքված աշխատանքային պայմանագրով սահմանված պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Ինստիտուտի Վերստուգողը

8.29. Ինստիտուտի Վերստուգողը ընտրվում է Ժողովի կողմից երկու տարի ժամկետով: Ինստիտուտի Խորհրդի անդամները և Ինստիտուտի տնօրենը չեն կարող լինել Վերստուգող:

8.30. Օրենքով սահմանված հաշվետվությանը կից ներկայացվող Վերստուգողի եզրակացությունը առնվազն պետք է պարունակի՝ Ինստիտուտի գույքի և ստացման աղբյուրների, իրականացրած ծրագրերի և դրանց արդյունավետության, ծրագրերի իրականացման ընթացքում ծախսված միջոցների վերաբերյալ տվյալներ:

8.31. Վերստուգողն որոշումներ ընդունում է միանձնյա:

8.32. Ինստիտուտի գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման հաշվետվությունները, Ինստիտուտի և նրա մամինների հաշվետվությունները Ժողովի կամ Ինստիտուտի կառավարման այլ մարմնի հաստատմանն են ներկայացվում դրանց վերաբերյալ Վերստուգող մարմնի եզրակացության հետ միասին:

8.33. Վերստուգողը իրավասու է՝

8.33.1. Տարին մեկ անգամ անցկացնելու Ինստիտուտի ֆինանսատնտեսական գործունեության ստուգում:

8.33.2. Ծանոթանալ Ինստիտուտի գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և գրավոր կարգով պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնել Ինստիտուտի մարմիններին, որոնց վերաբերյալ մարմինները պարտավոր են ողջամիտ ժամկետում ներկայացնել գրավոր պատասխաններ:

8.33.3. Պահանջել և ստանալ Ինստիտուտի գործունեության վերաբերյալ տեղեկություններ:

8.33.4. Իրականացնել Ինստիտուտի կանոնադրությամբ կամ Ժողովի որոշմամբ նախատեսված այլ լիազորություններ:

9. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

9.1. Ինստիտուտի վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) կատարվում է նրա բարձրագույն մարմնի որոշմամբ: Ինստիտուտի վերակազմակերպումը դատական կարգով հնարավոր է միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

9.2. Ինստիտուտը կարող է միաձուլվել այլ Կազմակերպության (Կազմակերպությունների) հետ:

9.3. Ինստիտուտը կարող է միանալ այլ Կազմակերպության:

9.4. Ինստիտուտին կարող է (են) միանալ այլ Կազմակերպության (Կազմակերպություններ):

9.5. Ինստիտուտը կարող է բաժանվել այլ Կազմակերպությունների:

9.6. Ինստիտուտից կարող է (են) առանձնանալ Կազմակերպություն (Կազմակերպություններ):

9.7. Ինստիտուտը կարող է վերակազմավորվել հասարակական միավորման որևէ այլ կազմակերպական-իրավական տեսակի կամ հիմնադրամի:

9.8. Ինստիտուտի (Ինստիտուտների) վերակազմակերպման հետևանքով նրանց կանոնադրությունների փոփոխությունները և (կամ) լրացումները կամ գործունեության դադարումը, ինչպես նաև նոր ստեղծված իրավաբանական անձինք պետական գրանցում են ստանում օրենքով սահմանված կարգով:

9.9. Ինստիտուտի գործունեությունը կարող է որոշակի ժամկետով կասեցվել դատարանի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Լիազոր մարմին) դիմումի հիման վրա՝ օրենքով սահմանված կարգով:

9.10. Ինստիտուտի լուծարումը հանգեցնում է նրա գործունեության դադարմանը՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցվելու: Ինստիտուտը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած, նրա գործունեության դադարման պետական գրանցման պահից:

9.11. Ինստիտուտը կարող է կամավոր լուծարվել իր բարձրագույն մարմնի որոշմամբ՝ ներառյալ այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով ստեղծվել է Ինստիտուտը, կամ այն նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար նա ստեղծվել է:

9.12. Ինստիտուտի հարկադիր լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ Լիազոր մարմնի պահանջով և միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

9.13. Ինստիտուտի լուծարումն իրականացվում է իրավաբանական անձանց լուծարման՝ օրենքով սահմանված կարգով և պայմաններով:

9.14. Ինստիտուտը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Ինստիտուտի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

9.15. Ինստիտուտի լուծարման մասին Ինստիտուտի բարձրագույն մարմնի որոշումը, Ինստիտուտի այլ մարմինների ու լուծարման հանձնաժողովի՝ լուծարման գործընթացին վերաբերող որոշումները, դրանք կայացնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, դատարան բողոքարկելու իրավունք ունի Ինստիտուտի ցանկացած անդամ: Այդ դեպքում դատարանը կարող է իր որոշմամբ կասեցնել վիճարկվող որոշման կատարման ընթացքը՝ մինչև գործի դատական քննության ավարտը:

9.16. Ինստիտուտի լուծարման պետական գրանցումն իրականացվում է իրավաբանական անձանց լուծարման պետական գրանցման համար օրենքով սահմանված կարգով:

10. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Սույն կանոնադրությունը այլ (երրորդ) անձանց համար ուժի մեջ է մտնում՝ դրա պետական գրանցման պահից: